


ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին Գործող հմր. 10 ՄԺՏ.
Գաւառաց 12 »
Վեցամս. Գործող 3 »
Գաւառաց 6 »
Կտար երկիրներու 2 1/2 1.
Ճանուցման տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուշ 5. աւելի անգամներու
համար զատ սահարկութիւն կըլ-
այ :
Խորաքանշիւք թիւ 40 փարա արծա-



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած լրագրաց ճանրու-
ծալքը խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի
— ճնորհին պիտի ուղղուի : Գաւա-
ռիս Ստանաքճըլար ճառակի թիւ
198 : Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յողուած, և
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՓԵՏՐՈՍԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ ներքին վիճակը բարեւո-
րման նշան չցուցներ, և վերջին թըղ-
թաբերով եկած լրագիրը ինչպէս նա-
եւ հեռագրական լուրերը կարեւոր
յաւելումներ կ'ընեն այն արիւնդուշտ
երեւոյթութեան վրայ, որ Բեդրասովը-
կի մէջ ի գործ կը դրուի : Գետովար
171 դաւադրութեան վրայ բաղմա-
թիւ ձերբակալութիւնը եղան պա-
շտօնի մէջէն և դուրսէն, և պալա-
տին սպասաւորը անգամ սաստիկ հըս-
կողութեան ներքեւ առնուելով, ար-
գելուեցաւ իրենց դուռն երկուս
քօ զօրավաճիկն վրայ դիտողութիւն-
ներ կը լինէին թէ յեղափոխականնե-
րը ձերբակալուեալ անկարող է, ուս-
տի կուրքօ դարձեալ Բեդրասովըկ
գտնուող զօրաց հրամանատար կար-
գեցաւ, և կայսեր փետր 24 թիւ հը-
րամանագրով Լորիս Մելիքով զօրա-
վարին նախագահութեան ներքեւ
գործադիր յանձնարարման մը կազմ-
ւեցաւ արտաքին կարգի արտօնու-
թիւններով խառնութիւններն աւելցան
և տանց մէջ խուզարկութիւնը շատ-
յան :

Կըսուէր թէ Չարն հրաժարական
պիտի տայ, սակայն այս զրոյցն ան-
հիմն եղաւ : այսու ամենայնիւ Եւրո-
պական թերթերէն ունենց գիտել
կուտան թէ կայսեր դաւադրոյն իշխա-
նութիւնը կամ Ռուսիոյ վրայ զիտատու-
րութեան իրաւունքը Լորիս Մելիքով-
վի հրամանաց ներքեւ գտնուող յանձ-
նարարին տրուած է : Այս բանը Չարին
կողմէ անձնական հրաժարում մը չէ,
բայց սկզբունքով հրաժարական մ'է,
քանզի Լորիս Մելիքովը դրեթէ Չար մը
կըլինի, և իւր նախագահած յանձնա-
խումբն ալ սարսափելի իշխանութիւն
մը կուենայ : Ասոր համար դաւադիրը
Լորիս Մելիքովի գէտ կ'ուղղեն իրենց
բոլոր ոյժն, և դեռ անցեալ օր անոր
վրայ ատորձանակ պարպելով ձերբակա-
լուած երկուստարէն հարցաքննու-
թեան միջոցին յայտարարեւ է թէ
անպատճառ պիտի սպաննեն զայն :
Ինչպէս կը տեսնուի, խառնութիւն-
ներն և զինուորական գիտատորու-
թիւնը փոխանակ հրդեհը մարելու-
աւելի կը բռնկուին, այնպէս որ
շատերը կը դուշակեն թէ Ռուսիա
մեծ յեղափոխութեան մը մօտ է : Ա-
ղատական բարենորոգումներ և Սահ-
մանագրութիւն դաւանան կըստին ի-
նիլ այս վիճակին, բայց Չարն յեղա-
փոխականաց սպառնալեաց առջև զի-
ջում ընեն երկչոտութեան նշան կը
համարի, և երբեք չհաճիր շնորհել
այն բարենորոգումներն, որք եթէ
ներքին անդորրութեան գէտ յանդու-
ղըն յարձակու մենք և եղեռնական

դաւադրութիւններ չլինէին, կրնա-
յին հաշակիլ : Կայսերական դաւադ-
րանին անդամներէն միոյն կարմեն
ուրիշ մը զրկուած հեռագիր մը կը
ժանուցանէ եղեր թէ Չարը մեծա-
պէս զայրացած է, թէ ոչ ոք կը հա-
մարձակի զիջման վրայ բան մը խօսիլ
իրեն, և թէ վերջին դաւադրութե-
նէն ի վեր միշտ կըսէ թէ անպատ-
ճառ Ռչնականաց մարդասպան ա-
ղանդին վերջ տալ պէտք է :

Կը կարծուի թէ Ռչնականք ոչ
միայն բոլոր Ռուսիոյ մէջ ճիւղեր ու-
նին, այլ և իրենց համախոհներ կան
բարձրագոյն կարգաց մէջ : այս նը-
կատմամբ կարեւոր թուղթեր ոստի-
կանութեան ձեռք անցած են :

Մոսկուայի երկաթուղոյն վրայ
եղած դաւադրութեան հեղինակ լի-
նելու կարծեօք փարիզի մէջ ձերբա-
կալեալ Հարթման, որ ֆարլ Մայէր
անունն և ուրիշ քանի մ'անուններ
կը կրէ եղեր, Գաղղիոյ և Ռուսիոյ լը-
րագրաց վիճաբանութեան նիւթ ե-
ղած է : Ըստ թան լրագրի կարծեաց
քանի որ Հարթմանի վրայ ամբաս-
տանութիւն կայ իբր հասարակ եղեռ-
նագործ և մարդասպան, Գաղղիոյ
կառավարութիւնը կրնայ զայն Ռու-
սիոյ յանձնել : Եթէ ամբաստանու-
թեան ստույգ լինելուն վրայ հաստա-
տուն ապացոյցներ ունենայ : բայց
կրնայ նաև չյանձնել քանզի Հարթ-
մանի յանցանքը քաղաքական է մի-
անդամայն, և ամեն անկախ կառա-
վարութիւն իրաւունք ունի քաղա-
քական դատաւարականներ չյանձնել
լու : Գաղղիոյ կառավարութիւնն յայ-
տարարեւ է թէ ըստ ամենայնի մի-
ջողդային իրաւանց համեմատ պիտի
շարժի : ֆարիզի Ռուսական դեսպան
Օրլօֆ իշխանն Հարթմանի դէմ կըլծ
ամբաստանութիւններն հաստատող
թուղթերը Գաղղիոյ կառավարու-
թեան յանձնել է, որոց վրայ նա-
խարարաց խորհուրդը պիտի որոշու-
տայ : դատական գործաց նախարա-
րին անգեղակալին ստանալէ յետոյ :
Սակայն չեմք գիտեր թէ արդեօք ըս-
տոյդ է այն զրոյցն, որուն նայելով
Օրլօֆ իշխանն սպառնացեր է իւր
անցողիքներն առնելով ֆարիզէն մեկնիլ
եթէ Հարթման Ռուսիոյ չյանձնուի :
Ռուսիոյ և Գաղղիոյ միջև բարեկա-
մարութեան և միջև իսկ դաշնակցու-
թեան զրոյցներ կը լուսնին, բայց
ահաւաստի միջադէպ մը որ կրնայ
երկու կողմին յարաբերութեանց դըռ-
չիլ : Գաղղիոյ կառավարութիւնն հան-
րապետական է, և հանրապետականք
կը պահանջեն բոլոր զօրութեամբ որ
Հարթման չյանձնուի : Այս խնդիրը
բաւական ուշադրութիւն գրաւած
է, և փախճանին հետաքրքրութեամբ
կ'սպասուի :

Անգղիական լրագրաց թղթակիցը

ասիէ տուալ քանի մ'անգամ ծա-
նուցած էին թէ մայրաքաղաքիս
Անգղիական և Գաղղիական դեսպա-
նաց միջև պարագլխին և յաճախ դըժ-
տութիւն կայ, թէ Պ. Ֆուրնիէ ա-
ռիթ չիտխցներ հակառակութիւն
ընելու Սըր Հ. Լէյարտի, և թէ Թուր-
քիոյ մէջ Անգղիական աղագրութեան
ընդարձակելուն թշնամի է, եւ : ԸՄ-
թեան լրագրին վերջին թերթե-
րէն միոյն մէջ փետր 25 թուով փարի-
զի թղթակցին քաջուած հեռագիր մը
կը տեսնեմք ծանուցանող իբրև յոյժ
հաւանական : Թէ Կ. Պօլսոյ Գաղղիա-
կան դեսպանն ի մօտոյ պիտի փոխ-
ւի : Այս փոփոխութեան սա պատ-
ճառը կը արուի թէ, կըսէ թղթա-
կիցը, Սըր Հ. Լէյարտ Պ. Ֆուրնի-
էի Թուրքիոյ մէջ Անգղիական աղ-
ագրութեան գէտ ունեցած հակա-
ռակութենէն և հանած արդեւքնե-
րէն դանդաղած էր : Լորս Պիքօն-
ֆիլա բարեկամական դիտարութիւն-
ներ ըրեր է Գաղղիական կառավա-
րութեան, և հետեւաբար Պ. Ֆուր-
նիէ քիչ ժամանակ յետոյ ետ պիտի
կանչուի, և անոր տեղ Անգղիոյ ա-
ւելի բարեկամ եղող դեսպան մը պի-
տի զրկուի եղեր ի Կ. Պօլսոյ :

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՐՄՈՒՆՔ

(Երբեմնական և վերջին Բէ- 2356)

“Լորս Սանտոն վերջերս ի իվըր-
բուլ ըրած մի բանախօսութեան մէջ
Յամանեան երկիրներու մօտակայ ա-
պագային վրայ խիստ լուստեալական
խօսքեր ըրած էր, բայց կերեւի թէ
իւր այն յայտարարութիւնները պէտք
է քիչ մը բարեփոխին կամ ուղղուն
փոքր-նոսր վիճակին վրայ Սըր Սթա-
ֆօրտ Նօրթփօլի անցեալ օր երես-
փոխանաց ժողովին մէջ ըրած սա-
կաւազմական դնահատութեամբ :
Թուրքիոյ դժուարութիւնները խիստ
մեծ են, և մինչև անգամ եթէ իրա-
կան սկզբնաւորութիւն մը լինի զա-
նոնք յաղթահարելու, բաւական ժա-
մանակի կարօտ է որ մեք էական ար-
գիւնքներ նշմարելու կարող լինինք :
Կանխահաս կը լինի ըսել թէ վերջերս
Սթաֆօրտ վաշային յոյժ փայլուն լեզ-
ւաւ մը նկարագրած դատական բա-
րենորոգումներն ստուգիւ անյաջող
թիւն ունենան, նոյն իսկ Թուրք նա-
խարարին յայտարարութեան նայե-
լով, առաջին անգամ հիմ մը տուած
պիտի լինին մաքուր, հաւասար և
յօժարաւորութեամբ դատական գրութեան
մը, յորմէ պէտք է կախուին ուրիշ բո-
լոր բարենորոգումներ : Իսկ եթէ ի
դերեւ երեսն, նոյն անյաջողութիւնը
նոր քայլ մը պիտի լինի դէպի այն
կոչութեան անգլանդն, որ յամառ և
անբարենորոգելի կառավարութեան

մը բաժնը պիտի լինի ի վերջոյ : Մեր
ձեռքն հասած ընդարձակ անդեկու-
թիւնը այս մի և նոյն եղրակացութեան
կը յանգին : Ելումսից նախարարն ը-
սաւ երեսփոխանաց ժողովին մէջ թէ
ի մօտոյ հրատարակուելիք կապոյտ
տետրակ մը Սթաֆօրտի Թուրքիոյ ինչ
ինչ մասերուն դժբաղդ կացութեանը
վրայ նոր և աւելի զօրաւոր վիայու-
թիւններ պիտի պարունակէ : բայց
կատարեալ ճանաչութեամբ կը յա-
րէ թէ “Այդ իսկ մեծ պատճառ
“մ'է” ոչ թէ մեր ձեռնարկած գոր-
ծէն այլ ևս ետ քաշուելու, այլ ա-
“ռաւել եռանդով զայն յառաջ տա-
“նելու : ” Այդ գործը” Կ. Պօլսոյ մէջ
նախարարաց որ և է կարգ մը պաշ-
տօնի մէջ պահելու վրայ չկայանար,
ոչ ալ այնպիսի Սթաֆօրտի մ'օժան-
դակել կը նշանակէ, որ իւր պար-
տաւորութիւնները կատարել չպիտի
ուղէ, այլ մեր գործին նպաստին է
Դրան Սթաֆօրտի երկիրներուն վերածը-
նութիւն տալ, եթէ հնար լինի այդ :
Ճշմարիտ է որ Սթաֆօրտի դուքսը կըսէ
թէ մեր բուն նպատակն յարձակման
դէմ պաշտպանել է զթուրքիա, և Լորս
Հարթմանին ալ նոյն գաղափարը կը
յայտնէ, բայց այս պաշտպանութիւ-
նըն յայնժամ միայն կարելի պիտի լի-
նի երբ ֆորթ-Ասիա իւր արդի ող-
բայի վիճակէն ազատուելով, գոհ
հանգարտ և բարգաւաճ վիճակի մը
մէջ դրուի :

“Իրողութիւնն այս է որ, ինչպէս
Սըր Հէնրի Լէյարտ ըսած էր դու-
թեան մը մէջ, զոր Լորս Հարթմանին
երեսփոխանաց ժողովին վերջին նըս-
տին մէջ յիշեց, ֆորթ-Ասիոյ մէջ
բարենորոգումաց դժուարութեան
համար ամենապարտաւոր պատճառաց
մին սա է որ եթէ նոքա չգործադ-
րին, վաղ կամ անագան Հայկական
խնդիր մը պիտի ծագի այնքան յար-
մար Ռուսական յարձակման դիտա-
ւորութեանց, որչափ եղաւ Պուլղարու-
կան խնդիրը քանի մը տարի յառաջ :
Այսու ամենայնիւ, բոլորովին հնար
է որ մեր ջանքերն համբերութեան
ու յարատեւութեան հակառակ դարձ-
եալ անյաջող երեսն ի վերջոյ : Եթէ
այդպէս լինի, թէ և Անգղիոյ մէջ
ընդգիւծակիր կառակցութիւնը պի-
տի յաղթանակէ ըսելով թէ Թուրքիոյ
մասին իրենց լուսնները ճիշդ ելած
են, այսու ամենայնիւ մարդկութիւ-
նըն ու քաղաքակրթութիւնը պիտի
սխալն միայն, և միւս կողմէն Արեւ-
ելեան խնդիրն ու առաջուան չափ
չիտի վիճակի մէջ պիտի մնայ : Բայց
տակաւին աւելի լաւ բաներ յուսա-
լու մասին կրնամք յարատեւել : Եթէ
Սթաֆօրտային ծանուցած դատա-
կան բարենորոգումներն և դերեկա-
մառն արդիւրդ պայմանագրութիւնն
անկեղծական և իրական անօրէնու-
թիւններ են, իրենց ժամանակին կա-

տարուելիք ուրիշ բազում բարեք մանց յառաջընթացը միայն կրնան լինել: Փոքր-լիտա բարեգաւաճման ու հարստութեան աղբիւրներով լի է, և պարկեշտ ու հաստատուն վարչութիւն մը միայն պէտք է իւր նախկին բարեգաւաճ վիճակը տալու այդ երկրին: Բայց անոր անկումը դարեւրու գործն եղած է, և չկրնար ըստպատելի որ վերածնութիւնն ալ մէկ աւուր մէջ կատարի: »

ՀՅՈՒՍՊԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բեղրադուրի 4 մարտ.

Լորիս Մեղիքով գործարան սպաննելու փորձ ընող անձն այսօր առաջին հարցաքննութիւն մը կրեց, և յայտարարեց թէ Լորիս Մեղիքով անպատճառ պիտի սպաննուի:

Լոնտոն 4 մարտ.

Վիեննայէն հետեւեալը կը հեռագրեն Տէյլի Թէլէգրաֆի.

«Բեղրադուրիէն եկած լրոյ մը նայելով, յեղափոխական մասնախումբը գործադիր ժողովոյ նախագահ Լորիս Մեղիքով գործարանէն սպաննելու է որ մինչև ութ օր ստանդէ քաշուի: »

«Բեղրադուրիի պահապան զօրաց վերջին հազար հոգի աւելցաւ: »

Սթէնլորտ լրագիրը Բեղրադուրիէն առած հետեւեալ հեռագրերը կը հրատարակէ.

«Լորիս Մեղիքով գործարան սպաննելու փորձ ընող անձը Հրեայ մ'է, որ Միտքի վարժարանին մէջ ուսանող էր: »

«Այս մարտը Լորիս Մեղիքով գործարանէն այն հարցմանը վրայ թէ ինչ պատճառաւ գնտակ արձակած էր իրեն, ստպատախանը տուաւ. — «Ձեր վրայ կըրակ ըրի, որովհետեւ դուք դաժնի մ'էք: »

Տէյլի Նիւզ լրագիրն ալ Բեղրադուրիէն եկած հեռագրի մը կը հրատարակէ, յայտարարող թէ Լորիս Մեղիքով գործարան սպաննելու ուղիով անգործն ապուշ և դադարաւ չունեցող մարդ մ'է, և հաւանականաբար դրամ ընդունելով գործի մ'եղած է այս ոճիւրն ի գործ դնելու:

Այս անգործ հասած հեռագիրք:

Լոնտոն 5 մարտ.

Բեղրադուրիէն հետեւեալը կը հեռագրեն Տէյլի Թէլէգրաֆի.

«Լորիս Մեղիքով գործարան սպաննել փորձող անձին անունն է Մլոսէցի: Կը հաստատեն թէ առաջին անգամ Բեղրադուրիի մէջ ձերբակալուած էր 1879 ին և Միտքը արքայութեան, ուստի փախչելով Բեղրադուրի եկած էր: »

Ոչնչականաց յանձնախումբը, Լորիս Մեղիքով գործարանի գործադիր մասնախումբին նախագահ անունով ժողովուրդական պէս որոշած էր բան մը չհրատարակել 2 մարտի դաժակալութեան տարեդարձին (մարտ 2ի) համար, և յետո՞ւ զեւր ամեն դիտաւորութիւն: Ահա յայնժամ Մլոսէցիի յանձնուելը է սպաննել զԼորիս Մեղիքով:

Բեղրադուրի 5 մարտ.

Մլոսէցիի այսօր կէս օրէն մէկ ժամ առաջ կախուեցաւ Սիմէո վանքին հրապարակին վրայ: Անթիւ բազմութիւն ակապատես կը լինէր Որ և է անկարգութիւն չեղաւ:

Լոնտոն 5 մարտ.

Օտ. Գոն.	10 5/8
Փոյ.	1865 12
»	1869 41 3/4
»	1871 63
»	1872 18 1/2
»	1873 40 7/8
»	Եղբայր. 35 5/8
Անգլ. Գոն.	97 1/16

Փարիզ 5 մարտ.

Օտ. Գոն.	10,32 1/2
Գաղլ.	8 9/10 116,92 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Սուլթանն իրեն մասնաւոր նշան իւր բարձր համարման, հաստաւակային կըթնութեան նախարար Միւնիսթրի վաշան վէշիլի աստիճան բարձր

րացնող կայսերական Մէնշուրն իւր ձեռամբ յանձնեց անոր:

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Բ. Գրան և Օսմանեան Պահալային միջև գոյացած համաձայնութեան համեմատ այս վերջինն օտար երկրները գտնուող Օսմանեան դեսպանատանց և հիւպատոսարանաց թոշակներն ըստ առաջնայն վճարել սկսեց է:

Վեհ. Սուլթանին հրամանաւ, հետեւեալագործող երկու նոր դուռներ պիտի կազմուին Երուսղէի պալատը սրահ պանոզ զօրաւաճիւն վրայ աւելնալու համար:

Տամատ Մահմուտ փաշան Կ. Պոլիս հասած օրն զղղակի Վեհ. Սուլթանին ըով երթալով իւր խորին երախտագիտութիւնն յայտնեց Ն. Վեհափառութեան, որ յոյժ համակիր ընդունելութիւն մ'ըրաւ անոր և երկայն օրէն տեսակցեցաւ:

Մայրաքաղաքի Պարսկական դեսպան Մօհսին խանին նախորդ դիւեր տուած դեսպանական և նախարարական պարահանդէսը բոլորովին Արեւելեան շքեղութիւնն մ'ունեցաւ և եղանակին առաջին կարգի պարահանդէսից կարգն անցաւ Վեհ. Սուլթանին իւր կողմէն որդին և եղբոր որդին զրկած էր: Օրիորդ Ֆուրնիէ երեկոյթին ընդունելութեան պատիւները կատարեց: Գեսպանաց մեծ մասը և Օսմ. քաղաքային և զինուորական բազմութիւն բարձրաստիճան պաշտօնատարք և Բերայի ընկերութեան պատուաւորագոյն մասը ներկայ գտնուեցան:

Ինչպէս որ մայրաքաղաքի Միշգրական հիւպատոս Պ. Ֆաուսթ արքէն ծանուցած էր, հինգշաբթի օրն Անգլիայից մեծ վաճառականք և Անգլիայի հետ առեւտրական գործողութիւններ ունեցող տեղացի Յոյն և Հայ պատուաւոր վաճառականք Անգլիական հիւպատոսարանն համախմբուելով, Անգլո-թուրք առեւտրական դաշնագրին և անոր յաւակից մարտական սակաւեղան փոխութեան լսողոյն վրայ խորհրդակցեցան:

Այս գործն առանձին քննելու և խորհրդածութեանց արդիւնքը տեղեկագրով մ'ուրիշ դուստրման մը մը ներկայելու պաշտօնով յիշեալ վաճառականաց մէջէն տասնի չափ անձերէ մասնախումբ մը կազմուեցաւ, որոյ մէջ կիւմիւշիէրտան էֆէնտին Հայ վաճառականները կը ներկայացնէ:

Փետր. 5/17ին Փլէյլիլոյ կողմը (Նօվի Պաղար) Աւստրիական դուստրտակի մ'է Ալպանիայի ապստամբաց խումբի մը միջև տեղի ունեցած կռուոյն վրայ՝ Աւստրիացի զօրաւորք միջոցներ ձեռք առին Լիմի ձորին մէջ գտնուող Աւստրիական զօրաց ապահովութեան համար: Ալպանիացի խումբն, որ յայտնուած է, Գարա տաղի սահմանադիւնի կողմը դնաց: Կըսուի թէ Բ. Գուռը կռուոյն ժամանակ Աւստրիացի դերի բռնած չորս իսլամներուն իրեն յանձնուելը կը լսողէր եղբր, բայց Աւստրիացիք տակաւին հաւանութիւն չեն տուեր Օսմանեան կառավարութեան այս պահանջման, և յիշեալ չորս իսլամները պատերազմական տոտանի մ'առջև դատելու մտադիր են:

Սինգ գնդապետին (որ տակաւին չէ կրցած ազատիլ) աւաղակներէ յափշտակուելով լեռները տարուելուն նկատմամբ եկած մանրամասնութեանց

նայելով, Անգլիայի քաջ սպայն երկար ժամանակ զինուոր գլխաւորութիւն ըրեր է աւաղակաց, որք ուրիշ կերպով չլինալով, յաղթել անոր, ստանը կրակի տուել և անձնատուր լինելու ստիպել են դնդապետն: Այս վերջինն ուղեր է տանն արձակեալ սպաններն և իւր ունեցած դրամները տալով ինքզինք ազատել, բայց Նիքո յանձն չէ առել: Այժմ, հրոսակաւ մըն ամեն օր իւր տեղը կը փոխէ և լեռնէ լեռ կերթայ, որով Սինգիին Անգլիական հիւպատոս Պ. Պլենթին Նիքոյի հետ բացած ընտանցութիւնները դժուարութեանց կը հանդիպին:

Գիւմէրաւ Ռուս գնդապետին թաղման հանդէսն, որ նախորդ օրը տեղի ունեցաւ, ցաւակցութեան ու համակրութեան հրապարակային ցոյցի մը կերպարանքն առաւ: Մայրաքաղաքի բոլոր դեսպանք, Բ. Գրան նախարարք և նոցա ներկայացուցիչք, այլ և այլ կարգէ բաւմնութիւն բարձրաստիճան պաշտօնատարք և պատուաւոր անձինք, և Եւրոպայի կամ տեղացի ամեն ազգէ հազարաւոր մարդիկ ներկայ գտնուեցան, և հանդէսը միջազգային ձև մ'առաջացաւ: Օսմանեան և օտարազգի սպայից փայլուն խումբ մ'այնեկաց կը գտնուէր, և մայրաքաղաքի նաւահանգիստը կեցող Ռուսական արքունի շոգենաւին զօրաց մէկ մասն և Օսմանեան զօրախումբ մը դադաղին կ'ընկերանային:

Գիւմէրա գնդապետին մարմինը Բանկալիի Ռուսական հիւանդանոցէն Ֆէրիքէյի Բողրքահանաց դերեզմանատունը փոխադրեցաւ: Շիշլիի ճանքէն անցնելով, ուր քարնկէց մի հեռուն քանի մ'օր առաջ դնտապետը մահացու գնտան ընդունած էր Պոնիք մուրաւիդին ձեռքէն: Պ. Շուհ Գերմանացի Բողրքահան քարոզիչը սրտառուչ դամբանական մը խօսեցաւ դերեզմանատան մատարանը մէջ, և հանդուցեղոյն մարմինն զմեռեցաւ Ռուսիայէն իւր ընտանեաց հրամանին սպասելով:

Մայրաքաղաքի Ամերիկեան դեսպան Պ. Մէյնըտ երէկ իզմիտ գնաց:

Վերջին օրերս, ինչպէս քառասուն փարսնոց մէծ խոխիներու, նոյնպէս կէս մէծ խոխիներուն ալ կեղծքն երեւան ելած է, և ձեն ու ծանրութիւնն ըստ ամենայնի նման են բուն Մէծիտիէի, թէ և ուրիշ կողմերէն ճանաչելի է:

Մահսուսէի ճանիք շոգենաւը Տրապիզունէն վերջին անգամ Կ. Պոլիս եկած ժամանակ, երբ Սինոյ ապրանք կը հանէր, շոգենաւուն մէջ պայթում մը տեղի ունենալով, տասը և եօթն ճանապարհորդք մեռան և քանի մը ճանապարհորդներ ալ վիրաւորեցան: Շոգենաւը շատ չվնասուեցաւ: Պայթող վառօդը ճանապարհորդաց կը վերաբերէր:

Օտէսայի նաւահանգիստին սառեւըն անհետացան և Ռուսական ընկերութեան շոգենաւներն ըստ առաջինոյն բանիլ սկսան:

Նախորդ դիւեր Էյուպի մէջ ծագած հրդեհէն երկու տուն միայն այրեցան:

Պուլլարիոյ արեւմտեան հարաւաքին սահմանադիւնոց վրայ աւաղակաց բազմութիւն խմբեր երեւան ելած են, որք յաճախ Գոսովոյի նահանգըն արշաւելով ասպատակութիւններ կ'ընեն, և երբ իրենց վրայ ստիպանութիւն կամ զօրք զրկուի՝ Պուլլարիա կ'ապստանան:

ԵՌՈՅՆԴՆՈՒՊՈԼԻՍ		
ԷՍԶՆԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ		
Կիւի իրիկուն գոյուեցաւ		44 27
Այս առաւօտ բացուեցաւ		41,23
Կէս օրին		41,23
Բուռի իրի երկարութիւն	Փր.	37
Պայթող բաւ	Փր.	440
Պարսկաց	Օսմ. իր.	3,30

ԵՂՈՅԸ ԳՐԱՊՈՅ		
23 Քեդրվար		
Յեղ. իր.	Պր.	410 8
Կարօյն տակ		87 20
Կիւի իրի Բուռ		90 6
Ռուսական թղթադրամ 8 բոլ.	ՅՏ	58 քարիք
Գլուրից	Պր.	51 30
Մէծիտիէ տարբերութիւն		7 45
Նիքոնոց		32 20
Մէծիտիք		34
Պլենտ		620
» 5 փարանոց		220

ԱՂԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք Հօր հիւանդութիւնը դեռ կատարելապէս չէ բարւոքած: Կը լսեմք թէ բաղմաթիւ նշանաւոր ազգայինք ամեն օր այցելութեան կերթան Ն. Սրբաւորութեան:

Գոհութեամբ կը լսեմք թէ սովորյ օգնութեան համար տիկիններէ ալ յատուկ մասնախումբ մը կազմուել և Ս. Պատրիարքն ալ հարկ եղած քաջալերութիւնն ընձեռել է:

Պատրիարքարանն՝ երկար տարիներէ ի վեր իրենց ընտանիքն ու զաւակունքն անխնամ թողլով Պոլիս դեղերով դաւառացի ազգայնոց ցուցակը Բ. Գուռը զրկելով՝ նոցա իրենց հայրենիքը զրկուիլ խնդրած էր:

Դատական գործոց նախարարին կողմէ Պատրիարքարան եկած պաշտօնագիր մը կը ծանուցանէ թէ յիշեալ թաղերին «Ումուրու հուդու» դիւլէ միւսթիֆին յանձնուելով վճիռ մը կամ որոշում մ'առանալ հարկ է:

Ս. Պատրիարքն ալ այս ինքիւրը Դատատանական խորհրդոյ յանձնեց է:

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Վան 16 յունի. 1880

... Տէր.

Վանայ սովելոց նպաստող յանձնաժողովը հրապարակաւ իւր երախտապարտ շնորհակալութիւն կը յայտնէ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր, որ ի նկատ առնելով Վասպուրականի 150,000 ազգայնոց վրայ ծանրացած սովը, անմիջական օգնութիւն հասնելու համար թէ՛ հանդանակութեան ձեռնարկեր և թէ՛ Բ. Գրան հաղորդեր է մեր վտանգաւոր վիճակը:

Սովի պատճառներուն և արդի վիճակին վրայ խօսելէ առաջ հարկ կը համարեմք նախ Բանձնաժողովոյ կազմութեան և գործոց մասին ծանօթութիւն տալ Ձեր Մեծութեան և համայն ազգայնոց:

1879 դեկտ. 3ին քաղաքիս Ռուսաց և Անգլիական վանք: հիւպատոսներու խորհրդով և երեմիա սրբաբանի առաջադիւթեամբ քաղաքիս ձեռնհաս ազգայնիկներէն յանձնաժողով մը կազմուեցաւ, որոյ անդամներն են.

Գեր. երեմիա Սրբազան—Նախագահ Մեծ. Գեորգ պէյ Գաղեսան—Մտն նապետ

» Մկրտիչ աղա Մարութեան—Գանձապետ

Ս. Տ. Սարգիսնց—Ստենագրօյր » Յարութիւն աղա Թերզիպաշան

